ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

20.06.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 520-Ա

«ՀԵՆՈ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ, հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 229-Ն որոշումը և «ՀԵՆՈ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍՊԻ-ի տնօրեն՝ Գագիկ Հարությունյանի /ՀՎՀՀ 09210974/ հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն ստանալու մասին հայտը:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Բավարարել «ՀԵՆՈ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից 2025 թվականի համար ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի, Գորիս համայնքի, Արցախյան խճուղի թիվ 4 հասցեում գտնվող բենզալցակայանում հեղուկ վառելիքի վաճառք թույլտվություն ստանալու հայտը:

2. Հանձնարարարել աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ երեք օրվա ընթացքում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն տարեկան՝ սահմանված տուրքը վճարելուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2025թ. հունիսի 20

ք. Գորիս